ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՉԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ (ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ) ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան

Երկու հազար քսանչորս թվականի օգոստոսի --ին

«Էֆես» ապահովագրական փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համարը՝ 14, ՀՎՀՀ՝ 08261284, գտնվելու վայրի հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Արաբկիր, Հրաչյա Քոչար 35/1, Շ 35/1)՝ ի դեմս գործադիր տնօրեն Արևշատ Մելիքսեթյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Կողմ 1), մի կողմից, և “-------” փակ բաժնետիրական ընկերությունը (պետական գրանցման համար՝ -------, ՀՎՀՀ՝ ----, գտնվելու վայրի հասցե՝ --------)՝ ի դեմս գլխավոր տնօրեն ------- -ի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ «Կողմ 2»), մյուս կողմից, այսուհետ յուրաքանչյուրն առանձին անվանվելով նաև՝ «Կողմ», իսկ միասին՝ «Կողմեր»,

- Հիմք ընդունելով այն, որ Կողմերը բանակցում են և մտադրված են համագործակցել և իրենց համագործակցության շրջանակներում Կողմերը ցանկանում են բացահայտել Կողմ 1-ի ցանկացած տեսակի ապահովագրության հետ կապված փոխշահավետ հետաքրքրություն ներկայացնող գործարար (բիզնես) հնարավորություն, և այդ կապակցությամբ յուրաքանչյուր Կողմ կարող է մյուս Կողմին տրամադրել և (կամ) բացահայտել առևտրային և (կամ) այլ գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն, որը, բացահայտող Կողմի ցանկությամբ, ստացող Կողմը պետք է դիտարկի որպես գաղտնի տեղեկատվություն և

- Հաշվի առնելով, որ Կողմերը ցանկանում են պահպանել միմյանց տրամադրված և (կամ) բացահայտված տեղեկությունների գաղտնիությունը և Կողմերը համաձայն են ստանձնել միմյանց գաղտնի տեղեկությունների չբացահայտման պարտավորություն՝ Կողմերը կնքեցին տեղեկատվության չբացահայտման սույն համաձայնագիրը (այսուհետ՝ «Համաձայնագիր») հետևյալի մասին.

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1 **Գաղտնի տեղեկատվություն՝** ցանկացած ոչ հրապարակային տեղեկատվություն և (կամ) տվյալ, որը ներառում է, բայց չի սահմանափակվում Համաձայնագրի 2.4 կետով սահմանված տեղեկատվության շրջանակով, որը Կողմին հասանելի է դարձել Համաձայնագրի 2.6 կետում նախատեսված եղանակներից որևէ մեկով գրավոր, տեսողական կամ թվային տարբերակով (ներառյալ՝ ֆաքս և էլեկտրոնային փոխանցման ցանկացած այլ ձև) կամ բանավոր: Գաղտնի տեղեկատվություն է համարվում Կողմերի միջև առկա բանակցությունների, ինչպես նաև հետագա համագործակցության ընթացքում կամ դրա առնչությամբ Կողմերից յուրաքանչյուրի ձեռք բերած կամ մյուս Կողմից, նրա աշխատակիցներից, գործընկերներից, մատակարարներից, հաճախորդներից, փոխկապակցված անձանցից կամ ցանկացած այլ երրորդ անձանցից ստացված կամ ցանկացած այլ եղանակով այդ Կողմին հասանելի դարձած տեղեկատվությունը, որը այս կամ այն կերպ առնչվում կամ վերաբերում է այդ Կողմին կամ նրա գործունեությանը և ամբողջությամբ պատկանում է այդ Կողմին:

1.2 **Գաղտնի տեղեկատվության բացահայտում՝** Համաձայնագրի 1.1 կետում սահմանված տեղեկատվությունը երրորդ անձանց գրավոր կամ բանավոր կամ էլեկտրոնային հաղորդակցության կամ որևէ այլ եղանակով տեսողական կամ

NON-DISCLOSURE AGREEMENT

Republic of Armenia, Yerevan City

On the -- of August, Two Thousand Twenty-Four

"EFES" Insurance Closed Joint-Stock Company (state registration number: 14, TIN: 08261284, located at: RA, Yerevan, Arabkir, 35/1 Hrachya Kochar St., Building 35/1), represented by Executive Director Arevshat Meliksetyan, acting on the basis of the company's charter (hereinafter referred to as "Party 1"), on the one side, and "-------" Closed Joint-Stock Company (state registration number: -------, TIN: ----, located at: --------), represented by General Director xxxxxx, acting on the basis of the company's charter, (hereinafter referred to as "Party 2"), on the other side, hereinafter each individually referred to as a "Party" and collectively as the "Parties",

- Whereas the Parties are negotiating and intend to collaborate, and within the framework of their collaboration, the Parties wish to disclose mutually beneficial business opportunities related to any type of insurance offered by Party 1, and in this connection, each Party may provide and (or) disclose to the other Party information constituting commercial and (or) other secrets, which, at the disclosing Party's request, the receiving Party shall treat as confidential information, and

- Considering that the Parties wish to maintain the confidentiality of the information provided and (or) disclosed to each other, and the Parties agree to undertake the obligation of non-disclosure of each other's confidential information, the Parties have entered into this non-disclosure agreement (hereinafter referred to as the "Agreement") on the following:

1. DEFINITIONS

1.1. Confidential Information: Any non-public information and (or) data that includes, but is not limited to, the scope of information defined in Clause 2.4 of the Agreement, which has become available to a Party through any of the methods provided in Clause 2.6 of the Agreement in written, visual or digital form (including fax and any other form of electronic transmission) or verbally. Confidential Information is considered to be any information acquired by each of the Parties during the negotiations between the Parties, as well as during or in connection with subsequent cooperation, or received from the other Party, its employees, partners, suppliers, customers, affiliated persons or any other third parties, or made available to that Party in any other way, which in one way or another relates to or concerns that Party or its activities and entirely belongs to that Party.

1.2. **Disclosure of Confidential Information:** Making available, revealing, or otherwise transmitting the information defined in Clause 1.1 of the Agreement to third parties in written or verbal form, or through electronic communication

թվային տարբերակով (ներառյալ՝ ֆաքս և էլեկտրոնային փոխանցման ցանկացած այլ ձև) հասանելի դարձնելը, հայտնելը կամ որևէ այլ կերպ փոխանցելը կամ դրանց ծանոթացնելուն ուղղված գործողություններ կատարելը, այդ թվում՝ Կողմ 1-ի և Կողմ 2-ի համագործակցության շրջանակներում կիրառվող էլեկտրոնային հարթակներ և (կամ) համակարգչային ծրագրեր երրորդ անձանց մուտքը թույլատրելը և (կամ) երրորդ անձանց չթույլատրված մուտքի դեպքում համապատասխան պաշտպանական միջոցառումներ չձեռնարկելը:

or any other method in visual or digital format (including fax and any other form of electronic transmission), or performing actions aimed at familiarizing third parties with such information, including allowing third parties access to electronic platforms and (or) computer programs used within the framework of cooperation between Party 1 and Party 2, and (or) failing to take appropriate protective measures in case of unauthorized access by third parties.

1.3 **Երրորդ անձ՝** Համաձայնագրի կողմ չհանդիսացող ցանկացած ֆիզիկական անձ և (կամ) իրավաբանական անձ, այդ թվում՝ իրավաբանական անձի ներկայացուցչությունը և (կամ) մասնաճյուղը՝ անկախ վերջինիս աշխարհագրական տեղակայումից: Երրորդ անձ են հանդիսանում նաև Կողմերի այն աշխատակիցները, որոնք իրենց աշխատանքային պարտականությունների բնույթով պայմանավորված չպետք է հասանելիություն ունենան Գաղտնի տեղեկատվությանը:

1.3. Third Party: Any natural person and (or) legal entity not party to the Agreement, including the representation and (or) branch of a legal entity, regardless of its geographical location. Third Parties also include those employees of the Parties who, due to the nature of their job responsibilities, should not have access to Confidential Information.

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. SUBJECT OF THE AGREEMENT

2.1 Համաձայնագիրը կարգավորում է Կողմերի միջև Գաղտնի տեղեկատվության չբացահայտմանն ու պահպանմանն առնչվող հարցերը:

2.1. The Agreement regulates matters related to the non-disclosure and protection of Confidential Information between the Parties

2.2 Համաձայնագրով Կողմերը ստանձնում են Համաձայնագրի 1.1 կետում սահմանված և 2.4 կետում մասնավորեցված Գաղտնի տեղեկատվությունը չբացահայտելու և դրա գաղտնիությունը պահպանելու փոխադարձ պարտավորություն:

2.2. By this Agreement, the Parties undertake a mutual obligation not to disclose and to maintain the confidentiality of the Confidential Information defined in Clause 1.1 and specified in Clause 2.4 of the Agreement.

2.3 Համաձայնագրի 1.1 և 2.4 կետերում չմասնավորեցված, սակայն օրենքի իմաստով առևտրային գաղտնիք և (կամ) ապահովագրական գաղտնիք և (կամ) բանկային գաղտնիք և հարակից գաղտնիք պարունակող տեղեկատվության հետ կապված հարաբերությունները սույն համաձայնագրով կարգավորված չլինելու դեպքում կարգավորվում եմ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենսդրությամբ:

2.3. In cases where relationships concerning information containing trade secrets and (or) insurance secrets and (or) banking secrets and related secrets within the meaning of the law, which are not specified in Clauses 1.1 and 2.4 of the Agreement, are not regulated by this agreement, they shall be governed by the applicable legislation of the Republic of Armenia.

2.4 Համաձայնագրի 1.1 կետով սահմանված Գաղտնի տեղեկատվությունը ներառում է, բայց չի սահմանափակվում տեղեկատվության հետևյալ շրջանակով՝

2.4. The Confidential Information defined in Clause 1.1 of the Agreement includes, but is not limited to, the following scope of information:

- Կողմերից որևիցե մեկի կողմից ուղղակի կամ անուղղակի կերպով, գրավոր, բանավոր տարբերակով կամ ցանկացած նյութական օբյեկտների, այդ թվում առանց սահմանափակման, փաստաթղթերի, գործառնական ծրագրերի, ֆինանսական տեղեկատվության, առևտրային գաղտնիքների, նոու-հաու-ի (know-how), ծրագրային ապահովման և ծածկագրերի զննման արդյունքում բացահայտված տեղեկատվություն.

- Information disclosed directly or indirectly by either Party, in written or oral form, or through examination of any material objects, including but not limited to documents, operational programs, financial information, trade secrets, know-how, software, and source code.

- բացահայտող Կողմին երրորդ անձանց կողմից բացահայտված տեղեկատվությունը:

- Information disclosed to the disclosing Party by third parties.

- բանակցությունների արդյունքում, ինչպես նաև հետագա ծառայությունների մատուցման կապակցությամբ ցանկացած առևտրային պայման և (կամ) դրա վերաբերյալ տեղեկատվություն,

- Any commercial terms and (or) information related to them, resulting from negotiations, as well as in connection with subsequent service provision.

- Կողմի բիզնես նախագծերի և գործունեության, արտադրական կառավարման համակարգերի, ֆինանսների, գործարքների և գործունեության, գործընթացների, ծրագրերի, նոու-հաույի (know-how), դիզայնների, տեխնիկական լուծումների, առևտրային գաղտնիքների, ծրագրային

- Information about a Party's business projects and activities, production management systems, finances, transactions and operations, processes, programs, know-how, designs, technical solutions, trade secrets, software, market opportunities, and customers.

ապահովման, շուկայական հնարավորությունների և հաճախորդների մասին տեղեկատվությունը,

- Կողմերի առևտրային գործունեությանը և տեխնոլոգիական գործընթացներին, վաճառքի մեթոդներին, ներկայացուցչական հմտություններին, ինչպես նաև Կողմի հետ գործնական հարաբերությունների մեջ գտնվող անձանց վերաբերող տեղեկատվությունը, որը նրանց համար կարող է գաղտնի համարվել,

- Կողմի կողմից կիրառվող մեթոդների, մոտեցումների, ընթացակարգերի, սարքավորումների հետ կապված բանավոր կամ գրավոր կերպով տրամադրված բոլոր պրեզենտացիաները, դրանց ներկայացման ձևերը, գծագրերը, բանաձևերը, առանձնահատկությունները, գրքերը կամ արխիվային տեղեկատվությունը, նամակագրությունը (թղթային և էլեկտրոնային), տեղեկատվական ձեռնարկները, հաշվետվությունները, փաստաթղթերը կամ արձանագրությունները, առևտրային գաղտնիքները, աշխատանքի ընթացակարգերի վերաբերյալ ցուցումները,

- Կողմի աշխատակիցների ցուցակների, աշխատակիցների որակավորման, հմտությունների և վարձատրության, աշխատակազմի և նրա կազմակերպական կառուցվածքի, կադրային քաղաքականության վերաբերյալ տեղեկություն,

- Կողմի աշխատակիցների համակարգիչներում և այլ էլեկտրոնային սարքերում (կրիչներում), Կողմի համակարգչային սերվերների վրա, էլեկտրոնային եղանակով ուղարկված կամ ստացված կամ այլ կերպ Կողմի ներքին ցանցում պահվող որևէ տեղեկություններ,

- Կողմի աշխատակիցների անձնական տվյալները, ինչպես նաև նրա հաճախորդների և գործընկերների նույնականացման և նրանց վերաբերյալ այլ տվյալներ, նրանց հետ նամակագրության և այլ հաղորդակցության բովանդակությունը,

- Մտավոր սեփականության օբյեկտ հանդիսացող տեղեկատվությունը,

- ցանկացած այլ տեղեկատվություն, որն ունի կամ կարող է ունենալ գաղտնի բնույթ և կարող է ազդել Կողմերի զարգացման ու արդյունավետ գործունեության վրա և որը վերջինիս հնարավորություն է տալիս արդյունավետորեն մրցակցել իր գործունեության ոլորտում և (կամ) որը Կողմի մրցակցի կողմից կարող է օգտագործվել ի վնաս Կողմի՝ որպես վերջինիս մրցակցային թերություն:

2.5 Այնուամենայնիվ, Գաղտնի տեղեկատվությունը չի կարող ներառել որևիցե տեղեկատվություն, որը.

- հայտնի էր հանրությանը և ընդհանուր առմամբ առկա էր հանրային տիրույթում՝ մինչ բացահայտող Կողմի կողմից տեղեկատվության բացահայտումը.

- հրապարակվել է կամ հանրամատչելի է դարձել՝ ստացող Կողմին բացահայտող Կողմի կողմից բացահայտումից/տրամադրումից հետո, սակայն որի պատճառ չեն հանդիսացել ստացող Կողմի գործողությունները կամ անգործությունը.

- բացահայտող Կողմի կողմից բացահայտման պահին արդեն իսկ գտնվում էր ստացող Կողմի տիրապետման ներքո, ինչն արտացոլված է ստացող Կողմի մոտ նախքան բացահայտումն առկա փաստաթղթերում և գրառումներում.

- Information relating to the Parties' commercial activities and technological processes, sales methods, presentation skills, as well as information about persons in business relationships with a Party, which may be considered confidential for them.

- All presentations, their forms of presentation, drawings, formulas, specifications, books or archival information, correspondence (paper and electronic), information manuals, reports, documents or records, trade secrets, work procedure instructions provided orally or in writing related to methods, approaches, procedures, equipment used by a Party.

- Information regarding a Party's employee lists, employee qualifications, skills and remuneration, staff and its organizational structure, and personnel policies.

- Any information stored on computers and other electronic devices (media) of a Party's employees, on a Party's computer servers, sent or received electronically, or otherwise stored in a Party's internal network.

- Personal data of a Party's employees, as well as identification and other data related to its customers and partners, the content of correspondence and other communications with them.

- Information that constitutes intellectual property.

- Any other information that has or may have a confidential nature and may affect the development and effective operation of the Parties, and which allows the latter to compete effectively in its field of activity and (or) which may be used by a Party's competitor to the detriment of the Party as a competitive disadvantage for the latter.

2.5. However, Confidential Information cannot include any information that:

- Was known to the public and generally available in the public domain prior to its disclosure by the disclosing Party.

- Has been published or made publicly available after disclosure/provision to the receiving Party by the disclosing Party, but not as a result of actions or inaction of the receiving Party.

- Was already in the possession of the receiving Party at the time of disclosure by the disclosing Party, as reflected in documents and records of the receiving Party existing before the disclosure.

- ստացող Կողմը ձեռք է բերել երրորդ անձից՝ չխախտելով տվյալ երրորդ անձի՝ գաղտնիության պահպանման պարտավորությունը.

- ինքնուրույն մշակել է ստացող Կողմը՝ առանց բացահայտող Կողմի Գաղտնի տեղեկատվության օգտագործման կամ հղման, ինչը և արտացոլված է ստացող Կողմի տիրապետման ներքո գտնվող փաստաթղթերում և այլ համապատասխան ապացույցներում.

- Կողմերը տրամադրել են հրապարակման նպատակով և որը Կողմերը համարում են ոչ գաղտնի, կամ օրենքի ուժով պետք է բացայատի ստացող Կողմը, այն պայմանով, որ նախքան բացահայտումը ստացող Կողմը բացահայտող Կողմին նախապես գրավոր ծանուցել է նման պահանջի առկայության մասին, իսկ օրենսդրական պահանջի բացակայության դեպքում՝ ամեն կերպ աջակցի տեղեկատվությունը՝ հանրային բացահայտումից պաշտպանելու հարցում:

2.6 Համաձայնագրի իմաստով Գաղտնի տեղեկատվությունը կարող է արտացոլվել տարբեր ձևերով և կարող է Կողմին տրամադրվել տարբեր եղանակներով՝ ներառյալ, բայց չսահմանափակվելով՝ գրավոր, բանավոր և էլեկտրոնային եղանակով: Գաղտնի տեղեկատվությունը կարող է մշակվել և (կամ) պահպանվել և (կամ) փոխանցվել և (կամ) շրջանառվել տարբեր կրիչներով, այդ թվում՝ լինել համակարգչային ծրագրի տեսքով:

2.7 Յուրաքանչյուր Կողմ համաձայն է, որ անհրաժեշտ է ձեռնարկել ողջամիտ միջոցառումներ՝ պահպանելու մյուս Կողմի Գաղտնի տեղեկատվության գաղտնիությունը և կանխելու դրա բացահայտումը և անթույլատրելի կիրառումը: Առանց վերոշարադրյալի սահմանափակման՝ յուրաքանչյուր Կողմ պետք է ձեռնարկի նվազագույնը այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ են պահպանելու իր սեփական՝ գաղտնիության ամենաբարձր դրոշմանիշը կրող տեղեկատվության գաղտնիությունը:

2.8 Կողմերից ոչ մեկը չի կարող պատճենահանել մյուս կողմի Գաղտնի տեղեկատվությունը, եթե այն նախապես գրավոր կերպով համաձայնեցված չէ մյուս Կողմի հետ: Յուրաքանչյուր Կողմ ցանկացած նման պատճենի վրա պետք է վերարտադրի մյուս Կողմի՝ բնօրինակով սահմանված սեփականության իրավունքների մասին գրառումները: Գաղտնի տեղեկատվություն պարունակող նյութական կրիչների վրա կամ դրանց կից կարող են լինել (սակայն, ոչ պարտադիր) գաղտնիության վերաբերյալ նշումներ՝ ներառյալ, սակայն, չսահմանափակվելով՝ *«Գաղտնի», «Խիստ գաղտնի», «Կոնֆիդենցիալ», «Առևտրային գաղտնիք», «Ծառայողական գաղտնիք», «Սեփականատիրոջ իրավունք», «Հաճախորդի թղթակցություն»* նշումները:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Կողմերը պարտավոր են իրենց համագործակցության շրջանակներում միմյանց վերաբերյալ ստացված ցանկացած տեղեկություն ընդունել որպես Գաղտնի տեղեկատվություն, եթե Կողմը գրավոր և (կամ) էլեկտրոնային եղանակով մյուս Կողմին չի տեղեկացրել տրամադրված տեղեկատվության՝ Համաձայնագրի իմաստով Գաղտնի տեղեկատվություն չհանդիսանալու վերաբերյալ:

3.2 Տարընթերցումներից խուսափելու համար Կողմերը սահմանում են, որ Կողմի կողմից Համաձայնագրի 3.3 կետի խախտում չի համարվի սույն համաձայնագրի 2.5 կետի համաձայն Գաղտնի տեղեկատվություն չհանդիսացող

- Has been acquired by the receiving Party from a third party without violating such third party's confidentiality obligation.

- Has been independently developed by the receiving Party without the use of or reference to the Confidential Information of the disclosing Party, as reflected in documents and other relevant evidence in the possession of the receiving Party.

- The Parties have provided for the purpose of disclosure and which the Parties consider non-confidential, or which the receiving Party is required to disclose by law, provided that the receiving Party has given prior written notice to the disclosing Party of such requirement before disclosure, and in the absence of a legal requirement, has provided all possible assistance in protecting the information from public disclosure.

2.6. For the purposes of the Agreement, Confidential Information may be reflected in various forms and may be provided to a Party through various means, including, but not limited to, written, verbal, and electronic methods. Confidential Information may be processed and (or) stored and (or) transmitted and (or) circulated on various media, including in the form of computer programs.

2.7. Each Party agrees that it is necessary to take reasonable measures to maintain the confidentiality of the other Party's Confidential Information and to prevent its disclosure and unauthorized use. Without limiting the foregoing, each Party shall take at least those measures necessary to maintain the confidentiality of its own information bearing the highest confidentiality designation.

2.8. Neither Party may copy the Confidential Information of the other Party unless it has been previously agreed in writing with the other Party. Each Party must reproduce on any such copy the proprietary rights notices specified by the other Party on the original. Material media containing or accompanying Confidential Information may (but are not required to) bear confidentiality notices including, but not limited to, "Confidential", "Strictly Confidential", "Proprietary", "Trade Secret", "Official Secret", "Proprietary Right", "Client Correspondence".

3. OBLIGATIONS OF THE PARTIES

3.1. The Parties are obliged to accept any information received about each other within the framework of their cooperation as Confidential Information, unless the Party has informed the other Party in writing and (or) electronically that the provided information does not constitute Confidential Information within the meaning of the Agreement.

3.2. To avoid misinterpretation, the Parties stipulate that it shall not be considered a violation of Clause 3.3 of the Agreement by a Party if information that is not Confidential Information (publicly available) according to Clause 2.5 of this

(հանրամատչելի) տեղեկատվությունը, որը ձեռք է բերվել երրորդ անձանց հասանելի աղբյուրներից օրինական ճանապարհով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կամ երրորդ անձանց կողմից տեղեկատվություն ստանալը և (կամ) նման ճանապարհով տեղեկատվություն բացահայտելը և (կամ) տրամադրելը և (կամ) օրինական ճանապարհով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, հայտնի դառնալը, որը կապված չէ Կողմի դիտավորյալ արարքների հետ՝ ուղղված մյուս Կողմին վնաս պատճառելուն:

agreement is obtained legally from sources accessible to third parties in accordance with the procedure established by the legislation of the Republic of Armenia, or the receipt and (or) disclosure and (or) provision and (or) legal acquisition of such information by third parties, which is not related to the deliberate actions of a Party aimed at causing damage to the other Party.

3.3 Կողմերը պարտավոր են՝

3.3. The Parties are obliged to:

3.3.1 չպատճենել և (կամ) որևէ այլ կերպ չկրկնօրինակել և (կամ) չհավաքել և (կամ) չվերարտադրել Գաղտնի տեղեկատվությունը և այն պարունակող կրիչները չտրամադրել կամ որևէ այլ եղանակով չփոխանցել երրորդ անձանց,

3.3.1. Not copy and (or) reproduce in any other way and (or) collect and (or) reproduce Confidential Information and not provide or transfer in any other way to third parties the media containing it,

3.3.2 Ձեռնարկել տեղեկատվական անվտանգության, ինչպես նաև Գաղտնի տեղեկատվության հետ առնչություն ունեցող անձանց հրահանգավորման անհրաժեշտ բոլոր միջոցները Գաղտնի տեղեկատվության պահպանման համար, որը, ի թիվս այլնի, ներառում է, սակայն չի սահմանափակվում՝ տեխնիկական համապատասխան հագեցվածություն ապահովելով, էլեկտրոնային ֆայլերի գաղտնիությունը գաղտնաբառերով և (կամ) տեխնիկական այլ լուծումներով պահպանելով, աշխատակիցների և կոնտրագենտների հետ համապատասխան տեղեկատվության չբացահայտման համաձայնագրեր կնքելով և այլն,

3.3.2. Take all necessary measures for information security, as well as instructing persons related to Confidential Information for the preservation of Confidential Information, which, among others, includes, but is not limited to, ensuring appropriate technical equipment, protecting the confidentiality of electronic files with passwords and (or) other technical solutions, concluding appropriate non-disclosure agreements with employees and contractors, etc.,

3.3.3 Գաղտնի տեղեկատվությունը պահել այլ փաստաթղթերից առանձին, անվտանգ և երրորդ անձանց համար անհասանելի վայրում,

3.3.3. Keep Confidential Information separate from other documents, in a secure and inaccessible place for third parties,

3.3.4 տեղեկացնել մյուս Կողմին Գաղտնի տեղեկատվության ցանկացած չթույլատրված բացահայտման դեպքի վերաբերյալ, լրջագույն ջանքեր գործադրել նման հետագա բացահայտումը կանխելու համար,

3.3.4. Inform the other Party about any unauthorized disclosure of Confidential Information, and make the utmost efforts to prevent such further disclosure,

3.3.5 Մյուս Կողմից ստացված Գաղտնի տեղեկատվությունն օգտագործել միմիայն Կողմերի համագործակցության շրջանակներում ստանձնած իր պարտավորությունները կատարելու համար,

3.3.5. Use the Confidential Information received from the other Party solely for the purpose of fulfilling its obligations within the framework of cooperation between the Parties,

3.3.6 անհապաղ գրավոր տեղեկացնել մյուս Կողմին ՀՀ օրենսդրության համաձայն Գաղտնի տեղեկատվությունը կամ դրա մի մասը բացահայտելու պարտավորություն առաջանալու պարագայում,

3.3.6. Immediately notify the other Party in writing if there is an obligation to disclose Confidential Information or part of it in accordance with the legislation of the Republic of Armenia,

3.3.7 Մյուս Կողմից ստացված Գաղտնի տեղեկատվության, դրա մշակման, փոխանցման և շրջանառության առնչությամբ ապահովել իր աշխատակիցների և ցանկացած երրորդ անձի ամբողջական և անվերապահ տեղեկացվածությունը՝ իր կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների մասին՝ միաժամանակ ապահովելով ցանկացած երրորդ անձի կողմից Գաղտնի տեղեկատվության պահպանումը՝ Համաձայնագրի պայմաններին համապատասխան,

3.3.7. Ensure full and unconditional awareness of its employees and any third party regarding the obligations undertaken under the Agreement in relation to the Confidential Information received from the other Party, its processing, transmission and circulation, while ensuring the preservation of Confidential Information by any third party in accordance with the terms of the Agreement,

3.3.8 Մյուս Կողմի պահանջով անհապաղ վերադարձնել ամբողջ Գաղտնի տեղեկատվությունը և դրա պատճենները և (կամ) այլ կրկնօրինակները, իսկ Կողմի կողմից համապատասխան պահանջի դեպքում նաև դրանք ոչնչացնել ամբողջությամբ՝ գրավոր հաստատելով ոչնչացման փաստը նման պահանջ ստանալուց հետո եռօրյա ժամկետում:

3.3.8. At the request of the other Party, immediately return all Confidential Information and its copies and (or) other duplicates, and if requested by the Party, also destroy them completely, confirming the fact of destruction in writing within three days of receiving such a request.

3.3.9 Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների յուրաքանչյուր խախտման համար մյուս Կողմին վճարել Համաձայնագրի 4.3 կետում նշված տուգանքը՝ Կողմի կողմից այդ իրավունքն իրականացնելու

3.3.9. For each violation of the obligations undertaken under the Agreement, pay the penalty specified in Clause 4.3 of the Agreement to the other Party within 10 (ten) days from

մասին Կողմին ծանուցելու օրվանից 10 (տասը) օրվա ընթացքում:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Կողմերը պատասխանատվություն են կրում իրենց պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

4.2 Համաձայնագրով նախատեսված Կողմերի պարտավորությունները խախտելու դեպքում խախտող Կողմը պարտավոր է հատուցել մյուս Կողմի՝ այդպիսի տեղեկատվության բացահայտման արդյունքում և/կամ առնչությամբ կրած բոլոր վնասները:

4.3 Համաձայնագրով սահմանված պարտավորությունների խախտման դեպքում պարտավորությունները խախտած Կողմը մյուս Կողմին վճարում է տուգանք՝ 5 000 000 (հինգ միլիոն) ՀՀ դրամի չափով, ինչպես նաև հատուցում է մյուս Կողմին պատճառված վնասները (ներառյալ՝ բաց թողնված օգուտը) ամբողջ ծավալով, սակայն ոչ ավելի քան 10 000 000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով:

5. ՊԱՐՏԱՎՈՐԵՑՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

5.1 Սույն համաձայնագիրը որևիցե կերպով չի պարտավորեցնում Կողմերից որևիցե մեկին շարունակել միմյանց միջև կնքված ցանկացած գործարք. Կողմերից յուրաքանչյուրն իրեն իրավունք է վերապահում իր իսկ հայեցողությամբ դադարեցնել սույն համաձայնագրի ներքո դիտարկվող՝ գործարար հնարավորություններին առնչվող քննարկումները, որպիսի պարագայում Կողմը սույն համաձայնագրով նախատեսված պատասխանատվություն չի կրում:

6. ԵՐԱՇԽԻՔԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

6.1 Ողջ Գաղտնի տեղեկատվությունը տրամադրվում է «ԻՆՉՊԵՍ ԱՌԿԱ Է»: Կողմերից ոչ մեկը չի կարող տրամադրել բացահայտ կամ ենթադրյալ կամ որևէ այլ կերպ արտահայտված որևիցե երաշխիք՝ որևէ գաղտնի տեղեկատվության ճշգրտության, ամբողջականության կամ արդյունավետության վերաբերյալ:

7. ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ

7.1 Գաղտնի տեղեկատվություն պարունակող կամ արտահայտող բոլոր փաստաթղթերը և այլ նյութական կրիչները/իրերը, որոնք տրամադրվել/բացահայտվել են մի Կողմից մյուսին, և նման Գաղտնի տեղեկատվության՝ մյուս Կողմի տրամադրության ներքո գտնվող բոլոր կրկնօրինակները պետք է լինեն և մնան տրամադրող Կողմի սեփականություն և պետք է անմիջապես վերադարձվեն տրամադրող Կողմին՝ վերջինիս գրավոր պահանջի հիման վրա:

8. ԹՈՒՅԼԱՏՐԱԳՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

8.1 Սույն համաձայնագիրը չի նախատեսում որևէ Կողմին իրավունքների շնորհում և (կամ) փոխանցում և (կամ) մյուս Կողմի որևէ արտոնագրի, հեղինակային իրավունքի, ապրանքանիշի և (կամ) որևէ այլ մտավոր սեփականության օբյեկտի նկատմամբ իրավունքի և (կամ) թույլտվության տրամադրում, ինչպես նաև սույն համաձայնագիրը որևիցե Կողմին չի շնորհում որևէ իրավունք մյուս Կողմի Գաղտնի տեղեկատվության նկատմամբ, եթե այն հստակ սահմանված չէ սույն համաձայնագրով:

the date of notifying the Party about the exercise of this right by the Party.

4. RESPONSIBILITY OF THE PARTIES

4.1. The Parties shall be liable for non-performance or improper performance of their obligations in accordance with the current legislation of the Republic of Armenia.

4.2. In case of violation of the obligations of the Parties provided for in the Agreement, the violating Party is obliged to compensate the other Party for all damages incurred as a result of and/or in connection with the disclosure of such information.

4.3. In case of violation of the obligations stipulated by the Agreement, the Party that violated the obligations shall pay a penalty to the other Party in the amount of 5,000,000 (five million) AMD, as well as compensate the other Party for the damages caused (including lost profits) in full, but not more than 10,000,000 (ten million) AMD.

5. ABSENCE OF OBLIGATION

5.1. This agreement does not in any way oblige either Party to continue any transaction concluded between them; each Party reserves the right, at its own discretion, to terminate discussions regarding business opportunities considered under this agreement, in which case the Party shall not bear responsibility provided for in this agreement.

6. DISCLAIMER OF WARRANTY

6.1. All Confidential Information is provided "AS IS". Neither Party can provide any express or implied or otherwise expressed warranty regarding the accuracy, completeness, or effectiveness of any confidential information.

7. RETURN OF MATERIALS

7.1. All documents and other material carriers/items containing or expressing Confidential Information that have been provided/disclosed by one Party to the other, and all copies of such Confidential Information in the possession of the other Party shall be and remain the property of the providing Party and must be immediately returned to the providing Party upon its written request.

8. ABSENCE OF LICENSE

8.1. This agreement does not provide for granting and (or) transferring rights to any Party and (or) granting rights and (or) permission for any patent, copyright, trademark and (or) any other intellectual property object of the other Party, and this agreement does not grant any Party any right to the Confidential Information of the other Party unless it is explicitly defined in this agreement.

9. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

9.1 Համաձայնագիրը կարգավորում է սույն համաձայնագրի Կողմերի միջև Գաղտնի տեղեկատվության վերաբերյալ հաղորդակցումը սույն Համաձայնագրի ստորագրման օրվանից սկսած 10 (տասը) տարվա ընթացքում՝ հիմք ընդունելով սույն համաձայնագրի նախաբանում Կողմերի սահմանած նպատակը:

9.2 Համաձայնագրով սահմանված պարտավորությունները տարածվում են Կողմերի վրա Համաձայնագրի գործողության ողջ ընթացքում և վերոնշյալ պարտավորություններն ուժի մեջ կմնան սույն Համաձայնագրի լուծման կամ վաղաժամ դադարեցման դեպքում:

9.3 Կողմերի միջև ակնկալվող կամ իրական հարաբերությունների դադարեցումը ոչ մի կերպ անվավեր չի դարձնում Համաձայնագրի պարտավորեցնող բնույթը կամ վերջինիս վավերականության ժամկետը: Համաձայնագրի լուծումից հետո դրա շրջանակներում Կողմերին հայտնի դարձած և (կամ) որևէ այլ կերպ հասանելի դարձած Գաղտնի տեղեկատվությունը չբացահայտելու պարտականությունը շարունակում է ուժի մեջ մնալ անժամկետ:

10. ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

10.1 Համաձայնագրից բխող հնարավոր տարաձայնությունները և վեճերը Կողմերը լուծում են բանակցությունների միջոցով: Այն դեպքում, երբ Կողմերը փոխադարձ համաձայնության չեն գալիս, տարաձայնությունները և վեճերը լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատական կարգով:

11. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

11.1 Պայմանագրով ստանձնած պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել և/կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումը:

12. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

12.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելուց հետո:

12.2 Համաձայնագիրը պարտավորեցնում է Կողմերին և իրավական ուժ ունի վերջիններիս, ինչպես նաև նրանց իրավահաջորդների համար:

12.3 Սույն փաստաթուղթը պարունակում է Կողմերի միջև Համաձայնագրի առարկայի վերաբերյալ ողջ համաձայնությունը:

12.4 Համաձայնագրի որևէ դրույթի չկիրառումը չի ենթադրում հրաժարում ողջ Համաձայնագրի կամ դրա որևիցե դրույթի կատարումից:

12.5 Կողմերից ոչ մեկը իրավասու չէ փոփոխել Համաձայնագիրը կամ հրաժարվել պարտավորությունների կատարումից, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ձևակերպվում է գրավոր և ստորագրվում Կողմերի կողմից:

9. TERM OF THE AGREEMENT

9.1. The Agreement regulates the communication of Confidential Information between the Parties to this agreement for a period of 10 (ten) years from the date of signing this Agreement, based on the purpose defined by the Parties in the preamble of this agreement.

9.2. The obligations set forth in the Agreement apply to the Parties throughout the duration of the Agreement and these obligations will remain in force in case of termination or early termination of this Agreement.

9.3. The termination of expected or actual relationships between the Parties does not in any way invalidate the binding nature of the Agreement or its term of validity. The obligation not to disclose Confidential Information that has become known to the Parties and (or) has become available in any other way within the framework of the Agreement continues to remain in force indefinitely after the termination of the Agreement.

10. LEGAL REMEDIES

10.1. Possible disagreements and disputes arising from the Agreement are resolved by the Parties through negotiations. In the event that the Parties do not reach mutual agreement, disagreements and disputes are resolved through the judicial procedure established by the legislation of the Republic of Armenia.

11. FORCE MAJEURE

11.1. The Parties are released from liability for complete or partial non-fulfillment of obligations assumed under the Agreement if it was the result of force majeure that arose after the conclusion of the Agreement, and which the Parties could not foresee and/or prevent. Such situations are earthquake, flood, fire, war, declaration of military and emergency situations, political unrest, strikes, cessation of communication means, etc., which make it impossible to fulfill the obligations assumed under the Agreement.

12. OTHER PROVISIONS

12.1. The Agreement enters into force after it is signed by the Parties.

12.2. The Agreement is binding on the Parties and has legal force for them, as well as for their legal successors.

12.3. This document contains the entire agreement between the Parties regarding the subject matter of the Agreement.

12.4. Non-application of any provision of the Agreement does not imply a waiver of the performance of the entire Agreement or any of its provisions.

12.5. Neither Party is authorized to modify the Agreement or waive the performance of obligations, except when it is formulated in writing and signed by the Parties.

12.6 Կողմերը չեն կարող փոխանցել Համաձայնագրով սահմանված իրավունքները կամ յուրացնել, փոխանցել որևէ իրավունք կամ պարտավորություն առանց մյուս Կողմի նախնական գրավոր թույլտվության:

12.7 Դատարանի կողմից Համաձայնագրի որևէ պայմանի անվավեր կամ անկիրառելի ճանաչելու դեպքում՝ Համաձայնագրի մյուս պայմանները մնում են վավեր և կիրառելի՝ ինչպես ձևակերպման պահին:

12.8 Համաձայնագիրը կազմված է երկու հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ հայերեն և անգլերեն: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկ օրինակ: Հայերեն և անգլերեն տեքստերի միջև որևէ անհամապատասխանության դեպքում հայերեն տեքստը գերակայում է:

Կողմերի լիազորված ներկայացուցիչները կազմել են սույն համաձայնագիրը՝ ստորև հաստատելով վերջինիս պայմանների ընդունումը:

12.6. The Parties cannot transfer the rights established by the Agreement or appropriate, transfer any right or obligation without the prior written permission of the other Party.

12.7. In the event that any condition of the Agreement is declared invalid or inapplicable by the court, the other conditions of the Agreement remain valid and applicable as at the time of formulation.

12.8. The Agreement is drawn up in two copies of equal legal force in Armenian and English. Each Party is given one copy. In case of any discrepancy between the Armenian and English texts, the Armenian text shall prevail.

The authorized representatives of the Parties have drawn up this agreement, confirming the acceptance of its terms below.

13. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայնագրի կողմ /Agreement Party

«Էֆես» ԱՓԲԸ / EFES ICJSC

Պետական գրանցման համարը՝ 14, ՀՎՀՀ՝ 08261284/State registration number: 14, TIN: 08261284

Իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0033, Հր.Քոչար 35/1/ Legal Address: 35/1 Hr.Kochar, Yerevan, 0033, RA

Գործադիր տնօրեն / Executive Director

Արևշատ Մելիքսեթյան / Arevshat Meliksetyan

_____

Կ.Տ

13. ADDRESSES AND DETAILS OF THE PARTIES

Company/Ընկերություն

---------- **CJSC**

«-------» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, -------/ **Address:** ------- **street Yerevan, Armenia**

Գլխավոր տնօրեն General Director

-------/-------

_____

Կ.Տ